

Ճանապարհ, ժամանակ, արագություն/մաս 2

Մարմնի շարժման արագությունը միավոր ժամանակում նրա անցած ճանապարհն է:

60կմ/ժ արագություն ասելով հասկանում ենք, որ մարմինը 1ժամում անեցել է 60կմ ճանապարհ:


Արագություն = Ճանապարհ : ժամանակ

Ճանապարհ = ժամանակ · Արագություն

ժամանակ = Ճանապարհ : Արագություն


Խնդիրներ

1. Բեռնատարը 740 կմ ճանապարհի առաջին 320կմ-ն անցավ 80կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 60կմ/ժ արագությամբ: Բեռնատարը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը:




2. Գնացքը 310 կմ ճանապարհի առաջին 130 կմ-ն անցավ 65 կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 60կմ/ժ արագությամբ: Գնացքը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը:

3. A քաղաքից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 8 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 60կմ, իսկ երկրորդը՝ 65 կմ:




4. Դիլիջանից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 8 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 60կմ, իսկ երկրորդը՝ 65 կմ:


5. Գնացքը 2 օրում միևնույն արագությամբ անցավ 1620կմ ճանապարհ: Առաջին օրը նա ճանապարհի վրա ծախսեց 10 ժամ, իսկ երկրորդ օրը՝ 2 ժամ պակաս: Որքա՞ն ճանապարհ նա անցավ առաջին օրը:



6. Երևանից հակադիր ուղղություններով շարժվեցին երկու ավտոմեքենա: Քանի՞ ժամ հետո նրանց միջև եղած հեռավորությունը կլինի 780կմ, եթե մեկը շարժվում է 70կմ/ժ արագությամբ, իսկ մյուսը՝ 10կմ/ժ-ով պակաս արագությամբ:



7. A քաղաքից միաժամանակ հակադիր ուղղություններով դուրս եկան երկու ավտոմեքենա : Առաջինի արագությունը 60 կմ/ժ էր, իսկ երկրորդինը՝ 5 կմ/ժ -ով ավելի: Որքա՞ն կլինի նրանց հեռավորությունը 3 ժամ հետո:



8. 480կմ հեռավորության վրա գտնվող 2 քաղաքներից միաժամանակ իրար հանդիպակաց դուրս եկան երկու ավտոմեքենա և հանդիպեցին 3 ժամ հետո: Առաջինը գնում էր 60կմ/ժ արագությամբ: Որոշիր երկրորդ մեքենայի արագությունը:

